2126.711054

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 17 » 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0035-21

Ձեռնարկողը՝ ***«Բեսթ Ռոուդ» ՍՊԸ***
Սյունիքի մարզ, ք. Գորիս
Գ. Նժդեհի փ. տ. 65

Գործունեությունը՝ ***Վերիշենի խճակոպճաքարային հանքերևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

Թիվ ԲՓ 0035-21

<17> 02 2021թ.

Սյունիքի մարզի Վերիշենի խճակոպճաքարային հանքերևակման տեղամասում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Բեսթ Ռոուդ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզի Վերիշեն բնակավայր

Սյունիքի մարզի Վերիշենի խճակոպճաքարային երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Վերիշենի խճակոպճաքարային խառնուրդի երևակման տեղամասը վարչական առումով գտնվում է Սյունիքի մարզի Վերիշեն բնակավայրում:

Հետախուզվող տեղամասը գտնվում է Գորիս-Վահատուր ավտոճանապարհի ձախ կողմում՝ Բրուն գյուղից 2.4 կմ դեպի հյուսիս-արևելք, Վերիշեն գյուղից շուրջ 2,3կմ իսկ Գորիս քաղաքից՝ 6.2կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Երևակման հողերը ներկայացված են գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ գործառնականը՝ անջրդի վարելահողերով և այլ նշանակության հողերով:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Վերիշենի խճակոպճաքարային խառնուրդի երևակման երկրաբանական ուսումնասիրության ներկայացվող ծրագիրը կազմվել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքը, մորֆոլոգիական ձևը, տարածքի չափերը, ուսումնասիրվող կոպճագլաքարային առաջացումների հզորությունը, դրանց հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները:

ՀՀ ԲՆՊՈՒՆ ՄՇՏԱՅԻՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ * RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SPCO * ՀՀ ԵՐԵՎԱՆ "ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՍՊԸ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պետք է համապատասխանեն «Ավազակոպճային խառնուրդներ շինարարական աշխատանքների համար» 23735-79 ԳՈՍՏ-ի, 8635-95 «Ավազ շինարարական աշխատանքների համար» և 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» ՀՍՏ ԳՈՍՏ-երի տեխնիկական պահանջներին:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրած տարածքը զբաղեցնում է 1.35հա մակերես և սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS-84 համակարգով).

1. X=8612502	Y=4381188	5. X=8612722	Y=4381152
2. X=8612514	Y=4381209	6. X=8612633	Y=4381099
3. X=8612598	Y=4381209	7. X=8612543	Y=4381134
4. X=8612716	Y=4381163	8. X=8612557	Y=4381166

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 8 հորատանցք՝ 10-21մ խորությամբ՝ ընդհանուր 120.0մ ծավալով:

Հորատումը կատարվելու է ՈՒԳԲ-50Մ հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով, 132մմ սկզբնական տրամագծով և 76մմ վերջնական տրամագծով: Օգտակար հանածոյի հորատհանուկի գծային ելքը պետք է կազմի 96%:

Նախագծով նախատեսված 8 հորատանցքի համար 8 անգամ կկատարվի ՈՒԳԲ-50Մ ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Նախատեսվում է անցնել 4 հետախուզահոր, յուրաքանչյուրը 8մ խորությամբ: Հետախուզահորերը աշխատանքները նախատեսվում է կատարել էքսկավատորով:

Հետախուզահորերի ծավալը կկազմի՝ 32գծ.մ կամ 76.8մ3, այդ թվում 2.4մ3-ը կգոյանա հողաբուսական շերտից: Հետախուզահորերի մակերեսը կազմում է 2.4մ^2: Հետախուզահորերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում ՝ 9.6մ^2:

Դաշտային պայմաններում ավազների բնական խտության /բնամասում/, ծավալալիցքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար հետախուզահորերի անցմանը զուգընթաց, նախատեսվում է տեղամասում կատարել փորձնական հանույթ, դաշտային պայմաններում ծավալային և ծավալալիցքային զանգվածների, ինչպես նաև փխրեցման գործակցի որոշման համար, որը կիրականացվի հայտնի ծավալից՝ հանված նյութի կշռման եղանակով:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է տեղամասի հարավ-արևմտյան ծայրամասում նախատեսված թիվ 1 հորատանցքից շուրջ 15մ դեպի հարավ-արևելք, տեղամաս տանող գրունտային ճանապարհի աջ կողմից անցնել 1 փորձնական բացահանք՝ 100մ3 ծավալով /երկարությունը 10մ, առաջխաղացումը 5մ, հզորությունը 2մ/:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները՝ հորատանցքերը, հետախուզահորերը և փորձնական բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալներն են.

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷԿՍՊԵՐՏԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- հորատանցքեր-120գծ.մ,
- հետախուզահորերի փաստագրում-32.0գծ.մ,
- բացահանքի փաստագրում-10.0գծ.մ,

Ընդամենը՝ 162.0գծ.մ:

Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 76.8մ^3 ծավալով խճակոպճաքարային կուտակի հետլցնում: Աշխատանքները կկատարվեն ձեռքով:

Խճաքարային խառնուրդի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել ընդհանուր առմամբ 30 նմուշ:

Հորատանցքերից նախատեսվում է վերցնել 24 հանուկային նմուշ, յուրաքանչյուրը 5մ երկարությամբ: Յուրաքանչյուր հորատանցքից նախատեսվում է վերցնել 3 հանուկային նմուշ:

Հետախուզահորերից նախատեսվում է վերցնել ակոսային 4 նմուշ, իսկ փորձնական բացահանքից 2 նմուշ՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար: Նմուշների չափսերն ընդունվում են՝ 2.0x0.1x0.05մ^3:

Քիմիական անալիզների և միներոլոգիապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար նախատեսվում է համապատասխանաբար վերցնել 4-ական նմուշ:

Նախքան լաբորատորիա ուղարկելը նմուշները տեղում կենթարկվեն մշակման: Օգտակար հանածոյի լաբորատոր հետազոտությունները կկատարվեն «Շինսերտիֆիկատ» ֆիզիկատեխնիկական փորձարկումների լաբորատորիայում:

Ապարի քիմիական և միներոլապետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ ամիսը մեկ անգամ:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը /0.30մ չափով/, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով:

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 315.6մ^2 /հորատահրապարակներ- 256մ^2, հետախուզահորեր 9.6մ^2 և փորձնական բացահանք 50մ^2/: Վերականգնման ենթակա ծավալը կկազմի 128.68մ^3 /հորատահարթակներ-26.88մ^3, փորձնական բացահանք -25մ^3, հետախուզահորեր -76,8մ^3: Այդ ծավալները կարճաժամկետ կուտակվում են խախտված տարածքների անմիջական հարևանությամբ առանձին-առանձին և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվելու են խախտված հողատարածքների վերականգնման համար:

Աշխատանքները կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 220920 դրամ:

Ծրագրով նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում կան հանդամիջյան գրունտային ճանապարհներ, որոնք բարենպաստ են և ընկերությունը կօգտվի այդ ճանապարհներից:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐՈՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները: Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկում չկա: Երևակման տարածքում չեն դիտարկվել կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրավայրեր, որջեր, բներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները և մշտադիտարկումները.

- նավթամթերքների պահեստավորում և պահում՝ արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն՝ ապահովելով թափված նավթամթերքների հոսքը դեպի հավաքող բետոնապատված փոս,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար: Ուտիլիզացիայի պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո,
- հնամաշ դետալների ու մասերի, հորատման թագիկների հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն: Ուտիլիզացիայի պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո,
- կենցաղային աղբի կուտակում 35լ տարողությամբ տոպրակների մեջ և տեղափոխում Գորիս քաղաքային համայնքի աղբամաններ, որտեղից պարբերաբար կոմունալ ծառայության կողմից տեղափոխվում են շրջանի աղբավայր,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի (ծխագազերի ֆիլտրներ) տեղադրում,
- փոշենստեցման նպատակով հորատման հարթակների ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- աշխատանքների ավարտից հետո հորատիպ զուգարանի դատարկում՝ հատուկ ծառայության ուժերով, որի հետ պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման իրավունքը ստանալուց հետո:
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա,
- ըստ կիրառելիության բուսական աշխարհի օբյեկտների պահպանությանը վերաբերող ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշման դրույթների ապահովում:

Նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, հորատման, մակերևութային փորվածքների և փորձնական բացահանքի անցման ժամանակ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ԷԿՍՊԵՐՏԻԶՆԻ ԿԵՆՏՐՈՆ" ՊՈՍՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ՀԱՍՑԵ * РА ЕРЕВАН * ОСНО * РА YEREVAN * LLC ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- նավթամթերքների տեղակայված մասի հողերի աղտոտվածության մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,

- երևակմանը հարակից Գորիս գետի վտակի ջրերի մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Վերինշեն համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը 1.35հա տարածքում իրականացվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների վերաբերյալ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, ինչպես նաև՝ Սյունիքի մարզպետարանը: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ՀՀ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀՈՍ ՍՊԵՐՏԻԶԻ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ РА
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Բեսթ Ռոուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Վերիշենի խճակոպճաքարային հանքերևակման տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան